ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 39 (457)
www.syuniacyerkir.am

Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ եւ նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

Ակսել Բակունց

Ստալինյան բռնաճնշումների 80-րդ տարին

Ակսել Բակունցի ձերբակալությունը, դատավարությունը, գնդակահարությունը

Քաղաքական բռնությունը որպես երկիրը հնազանդության մեջ պահելու ղեկավարման ձեւ բոլշեւիկները որդեգրեցին սկզբից եւեթ՝ անմիջապես հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Դա սկսվեց քաղաքացիական կռիվներով, հետո ուղղվեց բոլշեւիկների պիտակավորած «դասակարգային թշնամու» դեմ, որոնց մեջ էին քաղաքի եւ գյուղի ունեւոր խավի ներկայացուցիչները, հոգեւորականությունը, նախկին զինվորականությունը՝ հատկապես սպայական կազմը, նախկինում այլ կուսակցությունների անդամագրվածները, հին մտավորականությունը, անհնազանդները:

Հեղաշրջումով սկսված քաղաքական բռնությունների այս ալիքը շարունակվեց եւ նոր ձեւ ու բովանդակություն ստացավ Ստալինի իշխանության տարիներին (1924-1953): Ստալինյան բռնությունների գագաթնակետը 1937 թվականն է: Այս տարի լրանում է պետական գործունեության աստիճանի հասցված այդ բռնությունների 80-րդ տարին: Ստալինյան բռնությունների ամբողջ համակազմը մարդկության դեմ գործված ոճիր է, հանցագործություն, որը պետք է գիտակցվի լրիվ ընդգրկումով, մանրամասների հարացույցով եւ դատապարտվի:

Հայ ժողովրդի մնացորդները նոր-նոր էին փրկվել թուրքական եղեռնից, երբ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո ընկան բոլշեւիկյան քաղաքական

էջ 6

Մարզպետներն այլեւս հիմնադրամներն ինքնուրույն չեն տնօրինի

Առաջիկայում մարզպետարանների եւ մարզպետների գործունեությունը կկարգավորվի հատուկ՝ «Տարածքային կառավարման մասին» օրենքով: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը նոր՝ «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագիծ է դրել շրջանառության մեջ: Ներկայումս մարզպետարանների եւ մարզպետների, նրանց տեղակալների գործունեությունը կարգավորվում է ՀՀ նախագահի 1997 թվականի «Մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրով: Վերը նշված օրենքով սահմանվում են մարզպետների, նրանց տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի, ստորաբաժինների ղեկավարների լիազորություններն ու պարտականությունները: Սակայն ամենակարեւոր նորարարությունը կայանում է նրանում, որ նոր օրենքով սահմանվում է մարզային հիմնադրամ հասկացությունը: Ինչպես հայտնի է՝ ներկայումս էլ մարզպետարաններն առանձին հիմնադրամներ ունեն, բայց դրանք ոչ պաշտոնական բնույթ են կրում, այդ հիմնադրամներում միջոցները հավաքագրվում են ռեկետի սկզբունքով, այսինքն՝ անհատները եւ իրավաբանական անձինք այդ հիմնադրամներին գումարները փոխանցում են՝ մարզպետարանի հետ կապված իրենց գործերն «առաջ գցելու» համար: Ավելին՝ մարզային զարգացման հիմնադրամների միջոցները ներկայումս ծախսվում են բացառապես մարզպետների հայեցողությամբ: Վերջիններս էլ, որպես կանոն, այդ հիմնադրամների գումարներով իրականացված ծրագրերը ներկայացնում են իբրեւ մարզպետի կողմից բարեգործություն: «Տարածքային կառավարման մասին» օրենքով մարզային հիմնադրամի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է: Հիմնադրամի միջոցների անմիջական կառավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում եւ ազատում է հիմնադրամի կառավարման խորհուրդը՝ մարզպետի առաջարկությամբ: Ավելին՝ մարզպետը պարտավոր է տնօրենի թեկնածությունը, մինչեւ խորհրդին ներկայացնելը, համաձայնեցնել ՀՀ վարչապետի հետ: Հիմնադրամների խորհուրդների կազմում ընդգրկվում են մարզպետները, համայնքների ղեկավարները, մարզային հիմնադրամների տնօրենները եւ կառավարության երեք ներկայացուցիչ: Մարզային հիմնադրամների միջոցների ծախսման գործընթացը փաստացի գտնվելու է ՀՀ վարչապետի անձնական հսկողության ներքո: Կարելի է ենթադրել, որ մարզային զարգացման հիմնադրամների միջոցները մարզպետների կողմից ինքնուրույն տիրապետելու գործելաոճը Հայաստանի բարձրագույն ղեկավարության սրտով էլ չէ: Ինչեւէ: Հայաստանի իշխանությունները նոր օրենքը նախատեսում են կիրառության մեջ դնել 2019 թվականի հունվարի 1-ից:

4 դեկտեմբեր 2017թ.
armlur.am

Որ բացառվեն արտադրական վթարները

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզի տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժանմունքը ստեղծվել է 2006 թվականի մայիսին (մինչ այդ՝ լեռնատեխնիկական տեսչություն): Տեխնիկական անվտանգության փորձաքննություն է իրականացվում արտադրական վտանգավոր օբյեկտներում (ԱՎՕ)՝ բենզալցակայաններ, գազալցակայաններ, ամբարձիչ սարքավորումներ, կարուսելներ, վերելակներ, քարի մշակման արտադրամասեր եւ այլն, ու տալիս եզրակացություն դրանց հետագա շահագործման վերաբերյալ:

Օրենսդրական դաշտում տեխնիկական անվտանգության հետ կապված հարաբերությունները, տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը կարգավորվում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով՝ ընդունված 2005 թվականի հոկտեմբերի 24-ին:

Եթե խոսենք թվերի լեզվով, բաժանմունքի կողմից 2017-ին մարզում փորձաքննության է ենթարկվել 407 օբյեկտ, իսկ ընդհանրապես Սյունիքում գրանցված է 181 վերելակ, 38 բենզալցակայան, 15 գազալցակայան, 61 կաթսայատուն, 8 կարուսել (Կապանում՝ 5, Սիսիանում՝ 3), 307 ամբարձիչ սարքավորում, իսկ լեռնահանքային արդյունաբերությունում՝ 84 արտադրական օբյեկտ: Բաժանմունքի տնօրեն Կարեն Մկրտչյանի փոխանցմամբ՝ ամենախնդրահարույցը գազալցակայաններն ու բենզալցակայաններն են, որոնց մեծ ուշադրություն են դարձնում:

էջ 7

Կարեն Մկրտչյան
«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզի փորձաքննության բաժանմունքի տնօրեն

Սերժ Սարգսյան. «Գաղտնիք չէ, որ շատ համայնքապետներ չարաշահում են իրենց պաշտոնը եւ այն օգտագործում են անհասկանալի եւ անընդունելի եկամուտներ ունենալու համար»

Նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 9-ին մասնակցել է տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության եւ «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության կողմից Դիլիջանում դեկտեմբերի 8-9-ը անցկացվող տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մարմիններին նվիրված խորհրդաժողովի ամփոփիչ նիստին:

Խորհրդաժողովի ամփոփիչ նիստում նա հանդես է եկել ելույթով, պատասխանել միջոցառման մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

Սերժ Սարգսյանը մասնավորապես նշել է. **«Ամուր տեղական ինքնակառավարումը եւ անկախ դատական իշխանությունը, թերեւս, ամենակարեւոր քննություններն են, որ մենք հանձնում ենք՝ որպես պետականություն կերտող ժողովուրդ: Հենց այդ քննությունները հաջողությամբ հանձնելուց է կախված մեր երկրի ապագան:**

Սա մեր պետությունն է, մեր ընդհանրական պատասխանատվությունը, ուստի մեղքն ուրիշի վրա բարդելու առիթ եւ արդարացում չպետք է փնտրենք: Ժողովրդավարություն հասկացությունն անիմաստ է առանց կայացած տեղական ինքնակառավարման: Սա է իսկապես կարեւոր դարձնում այս քննությունը մեր հասարակության եւ պետության համար:

Մենք կարող ենք եւ պարտավոր ենք միասին ու պատվով հանձնել այս քննությունը, բայց որպեսզի կարողանանք դա անել, ուղղակի պարտավոր ենք փոխել մեր վերաբերմունքը մեր պարտականությունների նկատմամբ: Գաղտնիք չէ, որ շատ համայնքապետներ չարաշահում են իրենց պաշտոնը եւ այն օգտագործում են անհասկանալի եւ անընդունելի եկամուտներ ունենալու համար՝ սկսած նրանից, ո՛ր տարբեր խորամանկություններով, տարբեր ձեւերով օտարում են համայնքներին պատկանող հողերը, ո՛ր անազնիվ վերաբերմունք են ցուցաբերում համայնքային բյուջեների նկատմամբ, եւ չմանրամասնեմ, որովհետեւ ինձ համար շատ տհաճ է այս խոսակցությունը: Մի բան եմ, ուղղակի, ուզում ասել. շատ ներողամիտ ենք եղել համայնքապետների նկատմամբ: Ներողամիտ ենք եղել, որովհետեւ համարել ենք, որ պետք է կայանան, այս ինստիտուտը պետք է կայանա, եւ այս ընթացքում հնարավոր են որոշակի վատ դրսեւորումներ: Ուզում եմ բոլորիդ, ոչ մեկին չեմ վախեցնում, ուղղակի ուզում եմ բոլորիդ զգուշացնել՝ եթե որեւէ մեկը պետք է այս գործերով զբաղվի, ավելի լավ է գնա ուրիշ տեղ աշխատի: Մենք պատրաստ ենք, անկեղծ եմ ասում, պատրաստ ենք մեր աչքի լույսի պես ձեզ վերաբերվել, պատրաստ ենք մեր հնարավորությունների սահմանում օգնելու՝ լինի դա անձնական, թե համայնքային հարց, բայց մենք պատրաստ չենք տեսնելու, թե ձեզնից ոմանք ինչպես են մեր բնակչության փողերը տանում իրենց տուն: Ամո՛թ է:

Մենք կարո՞ղ ենք պայմանավորվել, որ եթե այդպիսի երեւույթներ լինեն, որեւէ մեկը հանիրավի ուրիշին չի մեղադրելու: Եթե նույնիսկ դուք չասեք այո, ապա ես ասում եմ հետեւյալը՝ եթե այս նոր խոշորացված համայնքներում, իհարկե, մնացածներում եւս, այդպիսի դեպքեր հայտնաբերվեն, թող որեւէ մեկը ներողամտություն չհայցի, չսպասի, որ իրեն ներելու են, հատկապես, որ արդեն ես տեղեկացել եմ պարոն Լոքյանից, թե ինչպիսի հնարավորություններ կան աշխատավարձի հետ կապված:

Ես միայն ուրախ կլինեմ, որ համայնքապետների աշխատավարձը լինի բավականաչափ բարձր, բայց այդ հնարավորությունը պետք է լինի օրենքի սահմաններում եւ ոչ թե ասենք՝ ես 200 հազար դրամի համար առավոտից երեկո հո քարշ չե՞մ գալու այս գյուղով, այս համայնքով՝ իրենց նոքարը լինելով: Ով չի ուզում նոքար լինի, թող գնա աղա դառնա, գնա ուրիշ գործի: Եվ խնդրում եմ, որեւէ մեկը Նոր տարուց հետո՝ լինի մարզպետ, լինի նախարար կամ ինձ մոտ մարդ, չմիջնորդի որեւէ համայնքապետի ներելու համար այդպիսի դեպքերում: Նորից եմ կրկնում՝ մենք պատրաստ ենք, եթե ինչ-որ դեպք է պատահել, որ մեզնից կախված չէ՝ դժբախտ պատահար եւ այլն, պատրաստ ենք ամեն ինչով օժանդակելու, բայց դիտավորյալ ձեռքերը կեղտոտելը մենք պատրաստ չենք այլեւս հանդուրժել: Երեւի առաջին անգամ եք ինձնից լսում այսպիսի խոսքեր, բայց իմ մոտեցումը միշտ այդպիսին է եղել: Մենք արդեն հասունացել ենք եւ պետք է գիտակցենք մեր պատասխանատվությունը մեր համայնքի յուրաքանչյուր բնակչի համար»:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանին

Պատճենը՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանին, ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանին

Հարգելի պարոն վարչապետ

Վահե Հակոբյան մարզպետի գլխավորությամբ Սյունիքում շարունակվում է պայքարն ազատ խոսքի, բացախոսության, հրապարակայնության դեմ: Եվ պետության անունից կիրառվում են միջնադարյան ինկվիզիցիային բնորոշ մեթոդներ: Մարզպետի ու Քաջարանի կոմբինատի ղեկավարության մակարդակով հետապնդվում են այն բյուջետային ու գործընկեր կազմակերպությունները, որոնք համագործակցում են կամ փորձում են համագործակցել տասնհինգամյա «Սյունյաց երկիր» թերթի հետ:

Մասնավորապես՝ արգելվել է հանրակրթական դպրոցների տնօրեններին՝ 2018 թվականի համար բաժանորդագրվել մարզի առօրյան լուսաբանող միակ թերթը:

Ասենք, որ այդ օպերացիան մենք ցավով չենք ընդունում եւ, ինչ-որ առումով, տրամաբանական ենք համարում: «Սյունյաց երկրի» բաժանորդագրությունը տարիներ շարունակ հիմնականում կատարվել է մարդկանց (ընթերցողների) անձնական միջոցների հաշվին. այդպես ենք իրականացնում նաեւ 2018 թվականի բաժանորդագրությունը:

Սակայն վերջերս մարզպետ Վահեն ու նրա ներկայիս կին էլիզաբեթը հիմնել են անձնական-ընտանեկան թերթ՝ «Զանգեզուր պրես», որի շուրջ ընթացող զարգացումներն արմատապես փոխում են մարզպետարան-մարզային լրատվամիջոցներ հարաբերությունների, մարզի լրատվական դաշտի պատկերը:

Վահե մարզպետը, մարզպետարանի ֆինանսական վարչության պետի միջոցով, հանձնարարություն է իջեցրել մարզի հանրակրթական դպրոցներին՝ 2018 թվականի համար բաժանորդագրել 5-ական օրինակ «Զանգեզուր պրես»:

Եվ այս օրերին, երբ հանրակրթական դպրոցներում ծրագրվում է խիստ անհրաժեշտ ու պահանջված հաստիքների կրճատում՝ միջոցների սղության պատճառով, երբ նվազեցվում են հանրակրթությանը հատկացվող ֆինանսական միջոցները, Վահե-էլիզաբեթ զույգի անձնական-ընտանեկան թերթի բաժանորդագրության

պարտադրանք է ներկայացվում դպրոցներին:

Չէ, լրատվամիջոցների ենթադրվող մրցակցությունը չէ, որ մեզ անհանգստացնում է. այդ ոլորտում մրցակցություն առհասարակ լինել չի կարող, քանի որ Վահե մարզպետի վարկանիշը զրոյից բարձրանալու հնար չունի, եթե նույնիսկ մայրաքաղաքային բոլոր լրատվամիջոցներն օրական 24 ժամ լծվեն այդ գործին (ինքներդ կարող եք հարցախույզի միջոցով ճշտել ասվածի հավաստիությունը):

Մեզ անհանգստացնում ու զարմացնում է Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորության՝ հանրակրթական դպրոցների՝ առանց այդ էլ սուղ միջոցներից իր ու իր տիկնոջ անձնական-ընտանեկան թերթի օգտին փող շորթելու լկտիությունը:

Իսկապես, շատ էլ լավ են արել, որ ամուսիններով թերթ են հիմնել Սյունիքում, եւ մենք ողջունում ենք անկեղծորեն: Բայց ինչո՞ւ դպրոցների հնարավորությունների ներգրավմամբ, ինչո՞ւ դպրոցներն իրենց հայրական կալվածքի հետ շփոթելով:

Հարգելի պարոն վարչապետ

Սյունիքի մարզպետի կամայականությունների վերաբերյալ դիմումներին, ինչպես կյանքն է ցույց տալիս, Դուք ընթացք չեք տալիս սովորաբար. տպավորություն ունենք, որ Սյունիքի մարզպետի գործունեության վերահսկումը Ձեր լիազորությունների տիրույթից դուրս է: Եվ քիչ հավանական ենք համարում, որ այս անգամ գոնե բարձրացված հարցին ուշադրություն կդարձնեք:

Ու, այդ բոլորով հանդերձ, տեղյակ ենք պահում մարզպետի հերթական կամայականության մասին: Տեղյակ ենք պահում, որ Սյունիքի մարզպետը, չարաշահելով իր պաշտոնեական լիազորությունները, թերթի բաժանորդագրության քողի տակ փող է կորզում հանրակրթական դպրոցներից՝ հօգուտ իր ու իր տիկնոջ անձնական-ընտանեկան թերթի:

Կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված ելույթներից մեկում Դուք իբրեւ կոռուպցիա եք որակել այն երեւույթը, երբ պաշտոնեական լիազորությունների շնորհիվ պետական պաշտոնյան անձնական-ընտանեկան խնդիր է լուծում:

Դուք քանիցս անթույլատրելի եք համարել դրամահավաքության, կրթական խնդիրներից դուրս դրամավորման յուրաքանչյուր դրսեւորում դպրոցում, իսկ հիմա…

Մի ուրիշ հանգամանք էլ կա. գյուղական միջավայրում անգամ, որտեղ գրեթե բոլորն իրար բարեկամ են, Վահեն արգելում է դպրոցի տնօրենի բարեկամների աշխատանքը տվյալ կրթօջախում՝ վկայակոչելով Ձեր անունն ու հանձնարարությունը: Ինքը, մինչդեռ, իրեն թույլ է տալիս տվյալ դպրոցին պարտադրել իր ու իր տիկնոջ անձնական-ընտանեկան թերթի բաժանորդագրումը:

Նորի՞ց աչք փակենք եւ կեցվածք ընդունենք, թե իբր արտառոց ոչինչ չի կատարվում Սյունիքում:

Նորի՞ց հայտարարենք ի լուր աշխարհի, որ Սյունիքի մարզպետի շուրջ տեղի ունեցող մտահոգիչ գործընթացներին ու նրա հավանական-անհավանական արկածներին կատակով ենք վերաբերվում:

Անցած մեկ տարում (Երեւանի անթաքույց քաջալերանքով) սյունիքյան իրականության շատ ոլորտներ են պղծվել-աղավաղվել-խեղաթյուրվել: Սակայն ուզում ենք հավատալ, որ, թեկուզ ուշացումով, հանրակրթության սրբասուրբ բնագավառը զերծ կմնա Վահե Հակոբյանի քմահաճույքներից: Վերջիվերջո ո՞ր մեղքի համար Սյունիքի դպրոցները պետք է իրենց լղար ուսերին առնեն Վահե մարզպետի կայացման, ինքնահաստատման հավերժորեն անլուծելի խնդիրը:

Իսկ եթե մարզպետի հերթական արարքը վերստին անտես անեք ու ողջամիտ համարեք, ապա մենք չենք զարմանա ու չենք զայրանա եւ կշարունակենք գործել խոսքի ազատության վահեհակոբյանական նորահնար պայմաններում՝ ստույգ համոզված լինելով, որ ոչինչ չի կարող փրկել Սյունիքի օրվա մարզպետի անփառունակ վախճանը, ինչն այլեւս իրողություն է:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր
4 դեկտեմբերի 2017թ.

Շանթ Հովհաննիսյան. «Պետք չէ թատրոնի տնօրենին մեծապատիվ մուրացկան դարձնել»

Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը

«Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը 80 տարուց ավելի է, ինչ գործում է, ու այդ ճանապարհին ունեցել է ե՛ւ վերելքներ, ե՛ւ անկումներ: Անկախությունից հետո մեր բոլոր թատրոնները դժվարին ժամանակաշրջան էին ապրում, բայց, չնայած դրան, մեր թատրոնը երբեք չի դադարեցրել իր գործունեությունը, կանգ չի առել՝ շարունակելով ստեղծագործել, հնարավորինս պահել թատրոն-հանդիսատես կապը», - այսպես սկսեց իր խոսքը Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ Շանթ Հովհաննիսյանը, ով, ի դեպ, պաշտոնավարում է 2017թ. մարտ ամսից:

Մոտ 50 աշխատակցից դերասանական կազմում ընդգրկված է ընդամենը 13 հոգի՝ թե՛ երիտասարդ, թե՛ ավագ սերնդից: **«Դերասաններն աշխատում են փոխադարձ հարգանքի մթնոլորտում՝ գիտակցելով մեկը մյուսի դերակատարությունը թատրոնի պատմության կերտման ճանապարհին: Այսօր մեր խնդիրն է պասիվ աշխատանքային ռեժիմից անցնել ավելի ակտիվ ռեժիմի, որ կարողանանք առավելագույն արդյունք ապահովել»,** - նշեց տնօրենը՝ հավելելով, որ իր հաստիքացուցակով Գորիսի թատրոնը մեծ հնարավորություններ չունի: Ինչ վերաբերում է հաստիքների կրճատմանը կամ աշխատակիցներ հեռացնելուն, ապա, Շ.Հովհաննիսյանի խոսքով, դեմ է այդ քաղաքականությանը: Նախ՝ որովհետեւ դժվար է փոխարինող մասնագետներ գտնելը եւ երկրորդ՝ փոքր քաղաքում այնքան էլ հեշտ չէ մարդկանց աշխատանքից հանելը. **«Փորձում եմ աշխատակիցների բնավորության լավագույն կողմերի վրա հենվելով՝ ստեղծել համապատասխան աշխատանքային մթնոլորտ»:**

Զրուցակցիս փոխանցմամբ՝ մեր օրերում թատրոն ղեկավարելը շատ դժվար աշխատանք է, քանի որ դրա արդյունավետության համար անհրաժեշտ են համայնքային, մարզային եւ բարձր իշխանությունների աջակցությունը, լրացուցիչ ֆինանսական միջոցներ... **«Կարծում եմ՝ մշակութային ոլորտին ուղղված ֆինանսական հոսքերից դեպի թատրոն եւ այլ կարեւոր մշակութային օջախներ պետք է հնարավորինս շատ հատկացնենք, որ թատրոնը չկորցնի իր կենսունակությունը»:**

Մի քանի խնդիրների մասին

«Թատրոնի առջեւ ծառացած խնդիրները բազմազան ու բազմաբնույթ են: Այստեղ համադրվում են արվեստի բոլոր ճյուղերը, եւ այդ օղակները պրոֆեսիոնալ մակարդակի հասցնելու ճանապարհին ենք: Ցավով պիտի նշեմ, որ ինձ լավ ժառանգություն բաժին չհասավ: Հիմա, ինչպես ցույց է տալիս ժամանակը, կարծեք, փորձում են թատրոնը կամաց-կամաց տանել ինքնաֆինանսավորման՝ նվազեցնելով պետությունից տրվող լրավճարը: Սա հավանաբար կհանգեցնի հաստիքների կրճատման, մեր հնարավորություններն ավելի կնվազեն, բայց այնպես կանենք, որ կրճատումները գոնե չանդրադառնան առավել կարեւոր օղակներին: Բայց թեւաթափ չենք լինի եւ առավելագույն հնարավորությունները կօգտագործենք, որ մեր թատրոնը շարունակի բարձր մակարդակով կատարել իր առաքելությունը տարածաշրջանում», - նշեց թատրոնի տնօրենը:

Շ.Հովհաննիսյանը պաշտոնավարման այս կարճ ժամանակահատվածում որպես կարեւորագույն իրադարձություն առանձնացրեց մայիս ամսին կայացած «Թատերական Սյունիք» փառատոնը, որ մարզի մշակութային կյանքում աշխուժություն մտցրեց՝ արժանանալով դրական արձագանքի: Նա կարեւորեց նաեւ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային կանգառ» ծրագրի շրջանակներում մարզերում անցկացվող տարաբնույթ միջոցառումները: **«Բայց մշակութային կյանքի ակտիվացման տեմպը պահելը մի քիչ դժվար է, քանի որ թատրոնի ֆինանսական վիճակը չի բավարարում: Անհրաժեշտ են որակյալ բեմադրություններ հանդիսատես ապահովելու համար, ինչից էլ կախված է մեր հետագա գործունեությունը»,** - նշեց տնօրենը:

Մարզային թատրոնների ամենալուրջ խնդիրներից մեկն էլ բեմադրիչ ռեժիսորների պակասը կամ էլ առհասարակ նրանց բացակայությունն է: Այդ առումով Շ.Հովհաննիսյանը նշեց, որ մայրաքաղաքից բեմադրող ռեժիսորներ կհրավիրեն եւ հրավիրել են արդեն, բայց բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ նրանց դժվար է մարզում պահելը՝ պայմանավորված մայրաքաղաքի «գայթակղությամբ», համապատասխան պայմանների բացակայությամբ: **«Հրավիրված ռեժիսորները լավագույն դեպքում մնում են 1-2 տարի, այստեղ նվիրյալներ են հարկավոր, ովքեր, կապվելով այս հող ու ջրին, համապատասխան գործունեություն կծավալեն»**, - նշեց տնօրենը:

Բացի ֆինանսական, անհրաժեշտ կադրերի բացակայությունից կամ պակասից՝ թատրոնը մեկ այլ խնդիր եւս ունի՝ ձեւավորել կառավարման ճկուն մոդել: Այսօր խորհրդային տարիներից եկած, տարիներով ամրագրված սկզբունքներով հնարավոր չէ արդյունավետ կառավարում իրականացնել, ուստի պետք են նոր մոտեցումներ թե՛ ստեղծագործական խմբի, թե՛ վարչական կազմի հետ տարվող աշխատանքներում:

Որոշ ծրագրերի մասին

Չնայած Շանթ Հովհաննիսյանը դեռ նոր է պաշտոնավարում, բայց վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ հասցրել է որոշ քայլեր ձեռնարկել: Ֆինանսական վիճակի բարելավման համար որոշել են ներդնել աբոնոմենտային համակարգ, որը հաջողությամբ իրականացվում է մայրաքաղաքային թատրոններում: Այսինքն՝ դառնալով թատրոնի բաժանորդ՝ մարդը հնարավորություն կունենա տարվա կտրվածքով դիտել ներկայացումներ՝ ըստ նախապես սահմանված գրաֆիկի: **«Ամեն քայլ ձեռնարկելիս գալիս բախվում ենք մի կետի, այն է՝ յուրաքանչյուր հարցում հովանավոր է անհրաժեշտ: Թատրոնի դահլիճը վերանորոգելու համար դիմել եմ Գորիսի նորընտիր համայնքապետ Առուշ Առուշանյանին, տեղացի գործարարներին: Մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը նույնպես խոստացել է աջակցել հնարավորության սահմաններում»,** - նշեց Շ.Հովհաննիսյանը: Ի դեպ, Գորիսը պատրաստվում է 2018թ. ԱՊՀ «Մշակութային մայրաքաղաք» դառնալ, ուստի թատրոնի շենքի դահլիճը, որ քաղաքում միակն է մեծ միջոցառումներ անցկացնելու համար, պետք է ավելի պատշաճ տեսքի բերվի, ինչի համար, հուսով ենք, համապատասխան քայլեր կարվեն:

Նպատակ ունեն նաեւ վերանորոգել թատրոնի ճեմասրահը, որը հնարավոր կլինի օգտագործել տարբեր՝ թե՛ ցուցահանդեսների, շնորհանդեսների, ցերեկույթների կազմակերպման, թե՛ զբոսաշրջիկների համար տեղեկատվական կենտրոնի, թե՛ հանդիսատեսի համար հանգստի սրահի ստեղծման նպատակով: Թատրոնի շենքը բավականաչափ մեծ տարածք է, որը, սակայն, ըստ տնօրենի, չի օգտագործում իր բոլոր հնարավորությունները, ուստի մտածում են այն տարբեր գործառույթներով ներկայացնելու համար քայլեր ձեռնարկելու ուղղությամբ: **«Եթե անկեղծ լինենք, կցանկանայի, որ մեր քաղաքում իր բեմական հնարավորություններով 150-200 տեղանոց թատրոնի առանձին շենք կառուցվեր: Այս մեծ շենքը չափազանց դժվար է պահել, մանավանդ ֆինանսավորման այսպիսի պայմաններում: Ընդհանրապես դերասանի համար ոգեւորիչ է լեփ-լեցուն դահլիճի առաջ հանդես գալը, իսկ մեր դահլիճը 500 տեղանոց է, բայց ամեն ներկայացման ժամանակ այդքան հանդիսատես ապահովելը հեշտ գործ չէ»,** - նշեց Շ.Հովհաննիսյանը:

Ժամանակին հարուստ ավանդույթներ ունեցող Գորիսի տիկնիկային թատրոնը նույնպես նպատակ ունեն վերականգնել, ավելին՝ արդեն իսկ աշխատում են Թումանյանի «Բարիկենդանը» բեմադրելու համար:

Ի դեպ, այս տարի՝ Ամանորի տոնին ընդառաջ, «Անտառային հրաշք» ներկայացումը կհանձնվի թատրոնի փոքրիկ հանդիսատեսի դատին:

Շ.Հովհաննիսյանի խոսքով՝ դերասանները սիրում են շրջագայել, ուստի կփորձեն ակտիվացնել հյուրախաղային քաղաքականությունը՝ այցելելով տարբեր մարզեր, Արցախի Հանրապետություն, ինչու չէ՝ նաեւ արտասահման, եթե, իհարկե, դրա հնարավորությունն ունենան: Այս տարի Գորիսի թատրոնը հյուրախաղերով եղել է տարբեր քաղաքների բեմերում, ինչը եւս մեկ լրացուցիչ խթան է ակտիվ դերասանական գործունեություն ծավալելու, չլճանալու համար:

Թատրոն-հանդիսատես կապը

«Մի տեսակ թատրոն-հանդիսատես կապը խաթարվել է: Ժամանակին թատրոն հաճախելը պատվաբեր էր, արարողակարգ, մշակութային իրադարձություն: Հիմա այդ լավ երեւույթները հետ են նահանջել, հասարակության շրջանում եղած տարաբնույթ խնդիրներն անդրադարձել են թատրոնի դերակատարության վրա: Մյուս կողմից էլ՝ չգիտենք՝ ինչպիսի խաղացանկ կազմենք՝ կոմերցիո՞ն, թե՞ դասական, որ գրավիչ լինենք: Մի բան հստակ գիտեմ՝ քաղաքում թատրոն ունենալը ստատուս է, կարգավիճակ, որը պահպանելու գործում պետք է բոլորը շահագրգռված լինեն: Ինչ-որ բան միայն անելու համար անելով երկար չես գոյատեւի: Ակնկալում եմ, որ թե՛ իշխանությունների, թե՛ առանձին հովանավորների աջակցությունը մեր ջանքերի հետ համադրելով՝ կկարողանանք Գորիսում ակտիվ մշակութային կյանք ապահովել», - մտահոգություն հայտնեց վաստակավոր արտիստը:

Թատրոնը, նախեւառաջ, գրավիչ է իր խաղացանկով

«Մեր թատրոնում թեմատիկ առումով հաջողություններ են ունեցել հատկապես պատմական ակնարկները, բակունցյան թեմաներով ներկայացումները, բայց, իհարկե, դրանց վրա կանգ չենք առնում՝ պահպանելով բազմաժանրություն, ընդգրկելով թե՛ հայ, թե՛ արտասահմանյան դասականների ստեղծագործությունները», - նշեց տնօրենը՝ հավելելով, որ աշխատանքներ են տարվում նաեւ վերականգնել այն բոլոր ներկայացումները, որոնք ժամանակին հաջողություն են բերել Գորիսի դրամատիկական թատրոնին՝ դրանք երիտասարդ սերնդին յուրովի մատուցելու համար:

Հանդիսատեսին գրավելու ոսկե միջինը գտնելու խնդիր էլ կա. չգիտեն՝ նախապատվությունը տան կոմերցիո՞ն գործերին, որոնց լսարանը, կարծեք թե, այսօր ավելի մեծ է, թե՞ դասականին, որոնց սիրահարների համար, ցավով է նշում, այսօր հարկավոր է փոքրիկ ակումբներ ստեղծել: **«Անկախ ամեն ինչից՝ յուրաքանչյուր ներկայացման հիմքում մարդը պետք է լինի՝ իր տարբեր հատկանիշներով, իր հակասական էությամբ: Եթե թատերական ներկայացումը քեզ չհուզեց, մի պահ չկտրեց իրականությունից, ուրեմն իր առաքելությունը չկատարեց: Այնուամենայնիվ, կարծում եմ՝ արժեքները նույնն են, պարզապես մատուցման ձեւը պետք է փոխել, համատեղել դասականն ու ժամանցայինը՝ այդպիսով ապահովելով մեր կենսագործունեությունը, հանդիսատեսի ակտիվ հոսքը դեպի թատրոն, - նշեց Շ.Հովհաննիսյան՝ հավելելով. - մարդը պետք է հավես ու տրամադրություն ունենա թատրոն գալու համար, իսկ այսօր հայ մարդու կյանքում շատ խնդիրներ կան՝ սկսած սահմանի պաշտպանությունից մինչեւ սոցիալական վիճակ»:**

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը

Տարածաշրջանի դերասանական կազմի սերնդափոխությունն ապահովելու, հարազատ քաղաքի թատրոնին կապելու համար 2004թ. բացվեց Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը՝ «Դերասանական արվեստ» բաժնով: Այս տարիների ընթացքում մասնաճյուղը կարողացավ կատարել իր առաքելությունը, քանի որ այսօր թե՛ Գորիսի, թե՛ Կապանի թատրոններում աշխատում են նրա շրջանավարտները: **«Փոքր հնարավորություններով, բայց կարեւոր առաքելությամբ այսօր էլ Գորիսի մասնաճյուղը շարունակում է իր գործունեությունը, որտեղ այս պահին սովորում է 20 ուսանող: Ի դեպ, Արցախի Հանրապետությունում եւս կուրս բացվեց, ինչը շատ արդյունավետ էր նաեւ տեղի թատրոնների սերնդափոխությունն**

էջ 5

Աշոտ Սուքիասյան. «Երջանիկը ոչ թե մահացավ, այլ սպանվեց Կապանի համապատասխան բժիշկների տգիտության, անպատասխանատվության եւ անփութության հետեւանքով»

Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության աշխատակից, մարզում եւ հատկապես մարզի հանրակրթության ոլորտում հարգանք վայելող Երջանիկ Սարգսյանի անժամանակ ու ողբերգական մահվան հանգամանքները շարունակում են տարաբնույթ խոսակցությունների տեղիք տալ տարածաշրջանում:

Հատկապես այն կարծիքն է շրջանառվում, որ նրա մահը Կապանի հիվանդանոցի համապատասխան մասնագետների անպատասխանատու, անփույթ եւ անգրագետ վերաբերմունքի արդյունք էր:

Դեկտեմբերի 5-ին «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն այցելած Աշոտ Սուքիասյանը, ով հանգուցյալի աներձագն է, ներկայացրեց Երջանիկ Սարգսյանի երկրային կյանքի ողբերգական ավարտի հանգամանքները:

Ըստ Աշոտ Սուքիասյանի՝ Երջանիկն առողջական խնդիրներ չի ունեցել տարիներ շարունակ: Մոտ երկու տարի առաջ միայն՝ Երեւանում քթի վիրահատության ժամանակ, նկատվել էր, որ ճնշում ունի: Դրանից հետո կանոնավոր կերպով իրեն հետեւում էր, օգտագործում նշանակված դեղերը:

2017թ. նոյեմբերի 25-ին հայրենի Դավիթբեկ գյուղ էր գնացել: Այնտեղ հանկարծակի վատացել է, գիտակցությունը կորցրել ու երեսնիվայր ընկել: Եղբոր կինը, ով գյուղի բուժքույրն է, առաջին բուժօգնությունն է ցույց տվել: Գիտակցությունը վերականգնվել է, սկսել է խոսել, քայլել…

Երկու-երեք ժամ անց նրան հիվանդանոց են տեղափոխել. իր ոտքով, առանց օգնության, բարձրացել է բժշկի մոտ:

Հարազատների՝ ժամանակ առ ժամանակ տրվող հարցին՝ ինչպե՞ս ես, միանշանակ պատասխանում էր՝ լավ եմ: Բայց խոսքի մեջ որոշ հապաղումներ էին նկատվում:

Հիվանդանոցում նրան ընդունեց հերթապահ բժիշկը՝ Գարիկ անունով, հավանաբար՝ Քոչարյան, ում էլ գյուղի բուժքույրը ներկայացրեց գյուղում կատարվածի ու առաջին բուժօգնության մանրամասները: Դրանից հետո բժիշկը միջոցառումներ է ձեռնարկել եւ հավաստիացրել, որ ամեն ինչ արվում է: Հարազատներին հանգստացրել եւ ասել է, որ ուրիշ մասնագետներ հրավիրելու կարիք չկա, թեեւ այլ բժիշկներ հրավիրելու առաջարկներ արվեցին քանիցս:

Ճնշումը կարգավորելուց, սիստեմ միացնելուց հետո բժիշկն առաջարկում էր հիվանդին տուն տանել՝ իբր այլեւս անելիք չունեն, բայց հարազատները պնդեցին, որ գոնե այդ գիշեր մնա այնտեղ՝ բժիշկների հսկողության ներքո:

Սակայն… Որոշ ժամանակ անց (նոյեմբերի 25-ին)՝ մոտ ժամը 23:20-ին, հիվանդն ընկավ կոմայի մեջ՝ գիտակցության կորուստ, օրգանիզմի կրիտիկական վիճակ: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ սիստեմն անջատեցին եւ ինչ-որ դեղ տվեցին՝ իբր ճնշումը կարգավորման նպատակով:

Անմիջապես տեղափոխեցին վերակենդանացման բաժանմունք. այդ ժամանակ Գարիկ Քոչարյանի հետ մեկ ուրիշ բժիշկ էլ կար:

Հարազատները համոզվելով, որ Կապանում այլեւս հնարավոր չէ Երջանիկին փրկել, հետամուտ եղան ու համապատասխան մեքենայով նրան տեղափոխեցին Երեւան. նոյեմբերի 26-ին՝ մոտ ժամը 21-ին, հիվանդն արդեն «Աստղիկ» բժշկական կենտրոնում էր:

Ըստ Երեւանի բժիշկների՝ գյուղում նրա հետ տեղի ունեցածը թեթեւ ինսուլտ էր (ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում, որ կրել է անցողիկ բնույթ): Նոյեմբերի 25-ի երեկոյան տեղի ունեցածն էլ երկրորդ ինսուլտն էր:

Մասնագետների գնահատմամբ՝ հիվանդը Կապանում (երկրորդ ինսուլտից հետո) հայտնվել էր այնպիսի վիճակում, որ Երեւան տեղափոխելն այլեւս ավելորդ է եղել, նրան փրկելու հնար այլեւս չէր մնացել:

Երեք օր մնաց այդ վիճակում, իսկ նոյեմբերի լույս 29-ի գիշերը՝ ժամը 1.20-ին, մահկանացուն կնքեց:

Աշոտ Սուքիասյանը պնդում է, որ Երջանիկ Սարգսյանին **«կարելի էր Կապանում փրկել, բայց հիվանդանոցում բախվեցինք կատարյալ անտարբերության: Եթե խելոք, փորձառու, պատասխանատվության զգացում ունեցող մասնագետներ լինեին, եթե մտահոգված լինեին հիվանդի ճակատագրով, ապա ինսուլտը չէր կրկնվի…»:**

Զրուցակիցս պատմում է՝ **«Երջանիկի հարազատներին բժիշկներն ավելի շատ ինչ-որ անհասկանալի բացատրություններ էին տալիս հիվանդի մասին, քան կոնկրետ քայլեր ձեռնարկում»:**

- Ես մասնագետ չեմ եւ չեմ կարող ստույգ գնահատականներ տալ ու եզրակացություններ անել, բայց եթե սիստեմը չանջատեին վաղաժամ, եթե արգելեին տեղից շարժվելը, եթե խորհրդակցեին փորձառու մասնագետների հետ եւ ավելի մտահասու բժիշկներ հրավիրեին, ապա երկրորդ ինսուլտը գուցե եւ չլիներ, - ասում է Աշոտ Սուքիասյանը:

Նա զարմացած է բժիշկների եւ բուժքույրերի սիրողական, իմիջիայլոց վերաբերմունքից. **«Չորս հազար դրամ են վերցրել գլխի ռենտգեն հետազոտության համար, երեք հազար դրամ էլ իրենց համար են վերցրել, բայց ռենտգենից հետո չեն էլ իմացել, որ գյուղում՝ երեսնիվայր ընկնելու հետեւանքով, երջանիկի քիթը ջարդվել է: Եվ այդպես՝ երկու-երեք օր, մնացել է դրա պատճառած ցավի մեջ նույնպես»:**

Ու այսպիսի հետեւության է հանգել զրուցակիցս՝ **«Կապանի հիվանդանոցի համապատասխան բժիշկներն իրենց տգիտությամբ, անպատասխանատվությամբ եւ անփութությամբ սպանեցին Երջանիկին, բա բուժքույրերի պահվա՞ծքը՝ մուննաթ, իմիջիայլոցություն, արհամարհանք…»:**

Աշոտ Սուքիասյանը Երջանիկին հողին հանձնելուց հետո փորձել է հանդիպել Կապանի բժշկական կենտրոնի տնօրենի հետ, բայց դրա համար պահանջվել է երեք օր՝ մի օր չգիտեին՝ որտեղ է, հաջորդ օրը՝ Քաջարանում է, երրորդ օրը… Նա փորձում էր հիվանդանոցի պատասխանատուից պարզագույն մի հարցի պատասխան ստանալ՝ ինչպե՞ս է ստացվել, որ մարդն իր ոտքով եկել է բուժվելու, բայց ժամեր անց, բժիշկների միջամտությունից հետո, բժիշկների «հսկողության» ներքո հայտնվել կոմայի մեջ…

***

Իհարկե, դժվար է գնահատական տալ Կապանի հիվանդանոցի բժիշկների գործունեությանը՝ կապված Երջանիկի մահվան հետ. ճի՞շտ են մոտեցել, սխա՞լ են թույլ տվել:

Միայն դատաբժշկական փորձաքննության արդյունքներն իմանալուց հետո կարելի է տեղի ունեցածին մասնագիտական եւ իրավական գնահատական տալ:

Մի բան, սակայն, ակնհայտ է հիմա. Կապանում հիվանդի հանդեպ ցուցաբերվել է, մեղմ ասած, ոչ մասնագիտական, սիրողական վերաբերմունք, այլապես վիճակը չէր խորանա նման արագությամբ: Սկզբից եւեթ հիվանդի ծանր վիճակն ըստ պատշաճի չի գնահատվել…

Կա եւ բարոյական խնդիր՝ հիվանդի ու նրա հարազատների, մերձավորների հանդեպ բժշկական անձնակազմի, քույրերի քմահաճ եւ անլուրջ վերաբերմունքը:

Տարօրինակ է հանգամանքը, որ Կապանի ու Քաջարանի հիվանդանոցները, իբրեւ երկու տարբեր ՓԲ ընկերություններ, հակառակ գործող օրենքի, գլխավորում է միեւնույն անձնավորությունը՝ ինչ-որ Կարեն (հիվանդանոցում շատերը նույնիսկ նրա ազգանունը չհիշեցին)՝ Երեւանից բերված ու այստեղ ներդրված:

***

Սյունիքի գործող մարզպետը մեկ տարի առաջ, հակառակ քրիստոնեական եւ սյունիքյան ավանդույթների, ցույց տվեց, թե ինչպես կարելի ձեռքեր տաքացնել դժբախտության վրա: Բայց մենք, միեւնույն է, մերժում ենք այդ գործելակերպը եւ նման ճանապարհով գնալու մտադրություն չունենք: Ուղղակի հույս ենք հայտնում, որ մարզպետը կքննարկի Կապանի հիվանդանոցում ստեղծված խայտառակ վիճակը, կստիպի իր դրածո տնօրենին, որ նա գործի հաճախի աշխատանքային բոլոր օրերին: Հույս ունենք նաեւ, որ կվերացվի Կապանի ու Քաջարանի հիվանդանոցների տնօրենների պաշտոնների ապօրինի համատեղումը, կքննարկվի հարցը, թե ռենտգեն հետազոտության համար ինչո՞ւ են հիվանդի հարազատից կորզել հավելյալ 3 հազար դրամ, ինչո՞ւ հիվանդանոցում մարդկանց հետ քաղաքակիրթ վարվելու մշակույթ չկա, ինչո՞ւ կոնկրետ հիվանդի վիճակին մասնագիտական գնահատական չի տրվել սկզբից եւեթ, ինչո՞ւ են ե՛ւ մարզպետարանում, ե՛ւ հիվանդանոցում հիստերիկ խաղեր տվել, երբ իմացել են, որ Կապանի հիվանդանոցի անտարբերության մասին հայտնի «թեժ գծով» տեղեկացվել է ՀՀ առողջապահության նախարարությունը:

Հիվանդանոցում, ի դեպ, հիշում են մարզպետի պատվիրանը տնօրենին՝ բժիշկների հետ հանդիպման ժամանակ՝ **«Կարեն, ես գնացի, իսկ դու տժժացրու»:** Կարենն էլ տժժացնում է… Հիմա պետք է մարզպետը նրան հետ պահի այդ գործելակերպից, որպեսզի նոր ու անհմաստ զոհեր չունենանք այլեւս: Եթե, իհարկե, Քաջարանի կոմբինատում ծվարած Զարուհի Տոնապետյանը թույլ տա մարզպետին…

***

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմն ափսոսանք է հայտնում Երջանիկ Սարգսյանի վաղաժամ ու ողբերգական մահվան կապակցությամբ, ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:

56 տարեկան էր, երեք զավակի հայր:

Անկատար երազներ ուներ, անելիքներ, ծրագրեր, բայց…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հրդեհային անվտանգությունն Ամանորին

Զանգվածային միջոցառումներ անցկացնող օբյեկտները եւ անձինք (պատասխանատուները) միջոցառումներ անցկացնելուց առաջ պետք է ապահովեն հրդեհային անվտանգության սահմանված պահանջները: Մարդկանց զանգվածային ներկայությամբ շենքերում, շինություններում եւ բաց տարածքներում Ամանորի եւ այլ տիպի միջոցառումների անցկացման ժամանակ անհրաժեշտ է՝

- տոնածառը տեղադրել առաջին (ծայրահեղ դեպքում՝ երկրորդ) հարկում, ընդարձակ սենյակում (որն ունենա մեկից ավելի տարհանման ելք), կայուն հենամասի վրա այնպես, որպեսզի ճյուղերը չքսվեն պատերին եւ առաստաղին.
- ապահովել առնվազն մեկ մետր միջտարածություն տոնածառի ու դյուրավառ իրերի, առարկաների միջեւ.
- տոնահանդեսի անցկացման վայրում էլեկտրական լուսավորության բացակայության դեպքում միջոցառումներն անցկացնել ցերեկային ժամերին.
- տոնածառի վրա օգտագործել լամպերի շղթաներ մինչեւ 12Վտ հզորությամբ լամպերի հաջորդական միացմամբ՝ առանց ցածրացնող տրանսֆորմատորի.
- լուսավորության անսարքություններ հայտնաբերելու դեպքում (լարերի տաքացում, լամպերի թարթում, կայծարձակում եւ այլն) սարքն անմիջապես հոսանքազրկել.
- բեմում եւ դահլիճում կազմակերպել հրշեջ հերթապահություն՝ կազմակերպիչների ուժերով:

Չի թույլատրվում՝

- օգտագործել աղեղնավոր լուսարձակներ, լուսավորել մոմերով, վառել հրավառելիք, ստեղծել այլ լուսային հրդեհավտանգ էֆեկտներ, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.
- օգտագործել գնդակներ, փուչիկներ, խաղալիքներ եւ զարդարանքի միջոցներ, որոնք պատրաստված են հրդեհավտանգ, ինչպես նաեւ ինքնայրման հակում ունեցող կամ միմյանց հետ շփվելիս այրում կամ պայթյուն առաջացնող նյութերից եւ պարունակում են հրդեհապայթյունավտանգ գազեր.
- տոնածառը տեղադրել անցումների վրա, միջանցքներում, դռան առջեւ.
- տոնածառը զարդարել հրապաշտպան բաղադրություններով չտոգորված ցելուլոիդե խաղալիքներով, թանզիֆով, բամբակով.
- միջոցառումների անցկացման տեղերը մթնեցնելու համար պատուհանները փակել ծածկոցափեղկերով.
- փոքրացնել կարգերի միջեւ եղած հեռավորությունները,

էջ 8

Ուշադրություն

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը, պետության կողմից հատկացված ֆինանսական լրացուցիչ ֆոնդի կապակցությամբ, հայտարարում է ընդունելություն մինչեւ դեկտեմբերի 15-ը ներառյալ՝ պետպատվերի սահմանում կորոնարոգրաֆիա/զոնդավորում/ ծառայության համար՝ բնակչության հետեւյալ խմբերում ներառված անձանց համար՝

- ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 36.01 եւ ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ,
- ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 36.01 եւ ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ՝ մասնագիտացված, հատուկ եւ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ ու սրտային վիրաբուժություն,
- 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք,
- 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք,
- 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք:

Վերը նշված խմբերի համար միայն զոնդավորումն է անվճար:

Այնուհետեւ՝

- ՀՀ ՊՆ զինվորական հրամանատարական անձնակազմի ծառայողներ,
- ՀՀ ՊՆ զինվորական հրամանատարական անձնակազմի ծառայողների ընտանիքների անդամներ,
- պարտադիր ժամկետային զինծառայության շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմի ծառայողներ,
- ՀՀ ոստիկանության զինծառայողներ,
- ՀՀ ոստիկանության զինծառայողների ընտանիքների անդամներ,
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության զինծառայողներ,
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության զինծառայողների ընտանիքների անդամներ,
- փրկարար ծառայողներ,
- փրկարար ծառայողների ընտանիքների անդամներ,
- ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներ,
- ՀՀ ՊՆ, Ոստիկանության, Ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցվածներ,
- ՀՀ ՊՆ, Ոստիկանության, Ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցվածների ընտանիքների անդամներ,
- ՀՀ ՊՆ, Ոստիկանության, Ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում քաղաքացիական հատուկ պաշտոններ զբաղեցնողներ,
- ՀՀ ՊՆ, Ոստիկանության, Ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում քաղաքացիական հատուկ պաշտոններ զբաղեցնողների ընտանիքների անդամներ,
- երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողներ եւ հարկադիր կատարողներ,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողներ եւ հարկադիր կատարողների ընտանիքների անդամներ,
- սոցիալական փաթեթի շահառուներ,

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 091-14-13-12 հեռախոսահամարով:

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն

Վերադարձան մրցանակով եւ շնորհակալագրով

Երեւանի «Բոհեմ» թատրոնում կայացավ համահայկական «Ազգային տարազ» մրցույթ-փառատոնը: Փառատոնը համախմբել էր ոչ միայն մայրաքաղաքի, այլ նաեւ մարզերի մասնակիցներին: Նմանօրինակ ծրագիրը Հայաստանում կազմակերպվել էր առաջին անգամ: Գաղափարի հեղինակը հասարակական գործիչ Էմիլ Մարկոսյանն է, ում խոսքով՝ նպատակը հայկական տարազը ցուցադրելն էր, վեր հանել էթնիկ մշակույթը: Միջոցառմանը խրախուսվում էին նաեւ այն գաղափարները, որոնք համատեղել էին ժամանակակից հագուստն ու դարերով մեզ փոխանցվող ազգային ոճը:

Պար, երաժշտություն, ասմունք եւ ոճային համարթյամբ: Կազմակերպության նախագահ Գոհար Ավանեսյանի խոսքով՝ այս մրցույթ-փառատոնին մասնակցելն ավելի շատ երեխաների ճանաչողական մակարդակի վրա ազդելու փորձ էր, կյանքը եւս մեկ անգամ սիրելու հնարավորություն տալու կարեւորություն: Գոհարի հետ զրույցից պարզ դարձավ, որ հեռավոր մարզից Երեւան ժամանելը բարդ գործընթաց էր, հատկապես, շարժողական խնդիրներ ունեցող մասնակցի դեպքում, բայց հուրախություն ամբողջ կազմակերպության՝ գտնվեցին բարեսիրտ անհատ հովանավորներ, ովքեր տրամադրեցին ճանապարհածախսի, մայրաքաղաքում մնալու համար բավարար գումար: Կազմակերպության նախագահի

ներ: Այս փառատոնի առանձնահատկությունն առանց սահմանափակումների ներկայանալն էր: Բազմաթիվ հայտերի արդյունքում ծրագրի գնահատող խումբը երկու-երեք ամսվա ընթացքում կարողացել էր ընկալել դիմողների հնարավորությունները եւ ներկայացնել մրցույթ-փառատոնի վերջնական փուլում ներկայացողների ցանկը: Մրցույթ-փառատոնի կապանյան մասնակիցները («Հուսո երիցուկ» հկ) պար ու ասմունքի միջոցով ներկայացրին զանգեզուրյան տարազը, գրավեցին բազմաթիվ հանդիսատեսների սրտերը, ոմանց էլ լավ ելույթով ստիպեցին հոտնկայս ծափահարել:

«Հուսո երիցուկ»-ը զբաղվում է հաշմանդամություն ունեցող եւ կարիքավոր ընտանիքների պաշտպանությամբ... փոխանցմամբ՝ այս միջոցառմանն իրենց մասնակցելը նաեւ «Ազգային տարազ» մրցույթ-փառատոնի կազմակերպիչ Էմիլ Մարկոսյանի եւ նույն ծրագրի հոգեբան Աննա Բադալյանի հոգեպես աջակից լինելու արդյունք էր:

Բազմատարազ ելույթներից հետո ժյուրին փակ քննարկման արդյունքում հրապարակեց անվանակարգերի հաղթողների անունները: Կապանցիները հատուկ մրցանակով ու շնորհակալագրով վերադարձան իրենց բնաշխարհ:

Շուշանիկ Ասատրյան
Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

Շանթ Հովհաննիսյան. «Պետք չէ թատրոնի տնօրենին մեծապատիվ մուրացկան դարձնել»

էջ 3

...ապահովվելու հարցում», - նշեց այդ մասնաճյուղի արդեն նախկին տնօրեն Շանթ Հովհաննիսյանը:

Վարչական աշխատանքը չի՞ խանգարում ստեղծագործական աշխատանքին

«Բնականաբար, ինձ շատ ավելի հոգեհարազատ է ստեղծագործական աշխատանքը: Ափսոսում եմ, որ, վարչական աշխատանքով պայմանավորված, ստիպված շատ հաճախ մերժում եմ ֆիլմերում խաղալու առաջարկները, քանի որ գիտեմ, որ երկար ժամանակով պետք է բացակայեմ: Բայց չեմ կարծում, եթե գայթակղիչ դերեր առաջարկվեն, կիրաժարվեմ: Ջգտում եմ գրաֆիկս այնպես կազմակերպել, որ գոնե տարին մեկ անգամ որեւէ ֆիլմում նկարահանվեմ», - նշեց ՀՀ վաստակավոր արտիստը:

Չի զղջում, որ ստանձնել է թատրոնի տնօրենի պարտականությունները, քանի որ գործունեությունը սկսել է այս թատրոնից, եւ այն մեկ այլ որակով ներկայացնելու մեծ ցանկություն, ձգտում կա: **«Հարուստ ավանդույթներ ունեցող այս թատերական միջավայրը վերականգնելու, պահպանելու ցանկություն կա իմ մեջ, եւ իմ բոլոր քայլերը միտված են դրան, ճանապարհի կեսին կանգնել եւ հրաժարվել հետագա ընթացքից չեմ կարող, քանի որ այս թատրոնն իմ ճակատագրի անբաժանելի մասն է կազմում: Գավառական քաղաքում մայրաքաղաքի լավագույն թատրոններին ոչնչով չզիջող թատրոն ունենալու տեսլականս, լավագույն ստեղծագործական կորիզ ստեղծելս պետք է իրականություն դարձնեմ»**, - լավատեսորեն նշեց Շ.Հովհաննիսյանը:

Այս պահին դերասան Շանթ Հովհաննիսյանը որեւէ ֆիլմում չի նկարահանվում, բայց ներկայումս ցուցադրվում են ֆիլմեր, որոնցում դեռ 2-3 տարի առաջ է նկարահանվել: Կինոթատրոններում ցուցադրվում է «Եվա» հայ-իրանական համատեղ արտադրության ֆիլմը, որն անկախությունից հետո պարսիկների հետ համագործակցության առաջին ֆիլմն է: Ի դեպ, այս ֆիլմի պրեմիերան Սյունիքի մարզում դեռեւս չի եղել, բայց մոտ ապագայում հավանաբար կլինի: Մեր հարցին, թե ինչպիսի արձագանքներ կան ֆիլմից, Շ.Հովհաննիսյանը պատասխանեց. **«Կարծիքները տարբեր են, ընդհանրապես ծանր դրամատիկական ենթատեքստերով ֆիլմեր դիտելը շատ քիչ մարդիկ են նախընտրում»**:

Շանթ Հովհաննիսյանի դերակատարությամբ ռեժիսոր Էդգար Բաղդասարյանի «Սիմոնի ճամփան» կարճամետրաժ ֆիլմը միջազգային տարբեր կինոփառատոներում շարունակում է մրցանակների արժանանալ: Շանթ Հովհաննիսյանն Անգլիայում կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոնում Սիմոնի կերպարի համար արժանացել է «Տարվա լավագույն դերասան» մրցանակի, Իսպանիայից նույնպես փառատոնին մասնակցելու հրավեր կա, որի համար, սակայն, նյութական միջոցներ են հարկավոր:

Որպես ամփոփում

Որպես ամփոփում՝ Շանթ Հովհաննիսյանը նշեց, որ պահանջներն ու ցանկությունները շատ են, բայց միայն թատրոնի միջոցներով հնարավոր չէ դրանք ի կատար ածել: Իրենց գերխնդիրը տարածաշրջանում մշակութային կոլորիտը պահպանելն ու զարգացնելն է: **«Մի փաստի վրա, այնուամենայնիվ, չեմ կարող կանգ չառնել. ցավով պիտի նշեմ, որ հաճախ դրսից եկած խմբերին ավելի մեծ նախապատվություն է տրվում, քան՝ տեղականին: Միայն կասեմ, որ պետք չէ թատրոնի տնօրենին մեծապատիվ մուրացկան դարձնել, այլ անհրաժեշտ է գիտակցել թատրոնի դերն ու նշանակությունը: Միակողմանի հնարավորություններով, միայն անձնական նվիրումով մեծ հաջողությունների հասնել հնարավոր չէ. հասկանում եմ, որ այսօր մեր պետական այրերն ավելի լուրջ խնդիրներ ունեն լուծելու, բայց չմոռանանք, որ դարեր շարունակ հայ ժողովրդի ազգային ինքնությունը պահպանվել է նախեւառաջ նրա մշակույթով, որի զարգացումը երկրորդական պլան պարզապես չի կարելի մղել: Լավատես եմ, հուսանք, ամեն ինչ լավ կլինի. չէ՞ որ ավելի վատ ժամանակներ էլ են եղել»**, - ամփոփեց զրույցը Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Շանթ Հովհաննիսյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստալինյան բռնաճնշումների 80-րդ տարին

Ակսել Բակունցի ձերբակալությունը, դատավարությունը, գնդակահարությունը

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

էջ 1

հալածանքների շուրջկալի մեջ: Հարավից Թուրքիան էր, հյուսիսից՝ Ռուսաստանը, որ, ձեռք-ձեռքի տված, ուզում էին բնաջնջել հայ ժողովրդին: Չմոռանանք Քեմալ Աթաթուրք-Լենին քաղաքական եւ ռազմական դաշինքը, որ ամեն ինչ ուղղեց ե՛ւ Հայաստանի առաջին հանրապետության, ե՛ւ նորաստեղծ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դեմ:

Հայաստանը տոկաց՝ կորցնելով տարածքներ եւ զոհ տալով իր զավակներին: Եթե պետական քաղաքականության վերածված թուրքական 30-ամյա ցեղասպանության (1894-1924) խորհրդանշական տարեթիվը համարում ենք 1915 թվականի ապրիլի 24-ը՝ Պոլսում եւ մյուս քաղաքներում հայ մտավորականության ձերբակալության օրը, ապա ստալինյան բռնությունների խորհրդանշական օրը 1936 թվականի օգոստոսի 9-ն: Այնտեղ թուրքական եղեռնն էր, այստեղ՝ խորհրդային:

1920-1953թթ. ՀԽՍՀ-ից ձերբակալվածների, գնդակահարվածների եւ աքսորվածների թիվը հասնում է 56.000-ի, 1949-ին ՀԽՍՀ-ից աքսորված հայերի թիվը 13000 է, ամբողջ ԽՍՀՄ-ից՝ 16000: Նյութերն ամփոփված են 19359 դատական գործերում, որ միասին կազմում է 40000 հատոր:

1946-1948թթ. հայրենադարձված 89500 հայերից 1000-ին ներկայացվեց քաղաքական մեղադրանք, ինչին հետեւեց նրանց աքսորը կա՛մ Ալթայի, կա՛մ Կրասնոյարսկի երկրամասեր:

Թուրքական ցեղասպանության 1,5 միլիոնի դիմաց սրանք, իհարկե, փոքր թվեր են, բայց չմոռանանք, նախ թվաքանակով կրճատվել էր նաեւ հայ ժողովուրդը եւ ապա ամբողջ ԽՍՀՄ-ի բազմազգ բնակչության ընդգրկումով այդ թիվն անցնում է տասնյակ միլիոններից:

Մինչեւ Ակսել Բակունցի անհատական ճակատագրին անցնելը՝ դեռեւս թերթենք պատմության պահոցների էջերը: Ձերբակալությունների գագաթնակետը 1936 թվականն էր, գնդակահարություններինը՝ 1937-1938 թվականները: Ըստ վիճակագրության՝ 1937թ. հունիս-1938թ. հուլիս ամիսներին՝ 13 ամսվա ընթացքում, յուրաքանչյուր 57 վայրկյանը մեկ գնդակահարվել է մեկ անձնավորություն: Պատկերն այս է՝

մեկ օրում 1516 գնդակահարություն,
մեկ ամսում՝ 46996,
մեկ տարում՝ 553340,
13 ամսում՝ 600236:

Մեկ այլ տվյալ հուշում է, որ աքսորվածների միայն 5 տոկոսն է կենդանի մնացել ու հետ վերադարձել:

Միայն գրական ոլորտից Հայաստանում ստալինյան քաղաքական բռնությունների է ենթարկվել շուրջ 70 մարդ, ցուցակը կազմել եմ: Այդ 70-ից մեկն Ակսել Բակունցն էր:

Բակունցը 1936 թվականի մայիս-հունիս-հուլիս ամիսներին Մոսկվայում Համո Բեկնազարյանի հետ նկարահանման էր նախապատրաստում «Զանգեզուր» շարժանկարի բեմարքը, երբ օգոստոսի սկզբին կանչեցին Երեւան, հարցաքննեցին, մեղադրեցին, կուսակցությունից հեռացրեցին ու ձերբակալեցին: Բակունցին խմբակային գործունեության մեղադրանք ներկայացվեց (մեղադրական գործ 4131, ֆոնդ 3036, 8 հատորով, 384 վավերագիր):

Այս խմբի մեջ էր հայտնի կուսակցական գործիչ, տարբեր տարիների լուսավորության ժողկոմ, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, համալսարանում տնտեսագիտության դասախոս, նախատեսվող «Հայկական հանրագիտարան»-ի գիտական խորհրդի անդամ Ներսիկ Ստեփանյանը: Խումբը նրա անունով էլ կոչվում էր՝ «Ստեփանյանի հանցավոր խումբ»:

Այստեղ էր նաեւ այդ տարիների ՀԳՄ առաջին քարտուղար, դարձյալ կուսակցական գործիչ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը:

Դատավարության ընթացքում հոլովվում են ժամանակի գրական-մշակութային շատ նշանավոր գործիչների անուններ:

Մեղադրական եզրակացությամբ Բակունցը եղել է՝

«1. ...հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական կազմակերպության անդամ, որը 1934թ. դեկտեմբերի 1-ին սպանել է Կիրովին եւ հետագայում նախատեսում էր այդպիսի տեռոր ընդդեմ ՀԱՄԿ(բ)Կ եւ խորհրդային իշխանության,

2. 1930թ. Չարենցի հետ կազմակերպել է հակահեղափոխական գրողների կազմակերպություն: 1933 թվականից գլխավորել է կենտրոնը, որը նպատակ ուներ սպանելու Ստալինին, նախապատրաստում էր մահափորձ Բերիայի դեմ,

3. կազմակերպությունը կապված էր Մոսկվայի կենտրոնի հետ (Վաղարշակ Տեր-Վահանյան եւ ուրիշներ)» [3, էջ 55]:

Բակունցի գնդակահարությունն իրականացրել են դատավճիռը նրան հայտնելուց մեկ օր հետո: Մեկ ամբողջ օր Բակունցն սպասել է իր մահվանը: Ինչ է մտածել, ինչ ապրումներ է ունեցել, ինչպես է դիմացել...

Այդ գիշերը Բակունցի կյանքի վեպն է:

Բակունցի գնդակահարության տեղի հարցը շատ տեսակետներ է հարուցել: Բակունցի դատական գործի մեջ այդ կապակցությամբ վկայություններ չկան եւ ըստ ժամանակին ընդունված գործավարության, չպետք է լինեին: Բակունցի գնդակահարության տեղի վերաբերյալ եղել են պարականոն վկայություններ եւ զրույցներ: Այդ մասին կա միմիայն մեկ ստույգ վկայություն, որ պահպանվել է Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում:

Մահարու խոսքի ստուգությունը կասկածի ենթակա չէ, որովհետեւ բանտում նրան եւ մի քանի այլ ձերբակալված գրողների պատմել է ՆԳԺԿ-ի պետ Մուղդուսու գլխավորած պատժիչ խմբի՝ Բակունցին գնդակահարողներից մեկը՝ Երեւանի բանտի պետ Սահակ Ասլանովը, ում այդ ժամանակ եւս ձերբակալել էին եւ պետք է գնդակահարեին:

Ըստ այդմ՝ Բակունցին գնդակահարել են Երեւանում՝ Թոխմախ լճի մերձակայքում [4, էջ 340]:

Պահպանվել են Բակունցի հարցաքննությունների 10 արձանագրություն, բանտից ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն, ՀԽՍՀ-ում ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի լիազոր, պետանվտանգության մայոր Մուղդուսուն, նաեւ Անդրկովկասյան զինվորական հանձնաժողովի դատախազի անուններով հասցեագրած 4 դիմում: Գործում զետեղված են նաեւ ցուցմունքներ այլ քաղբանտարկյալների հարցաքննություններից, առերեսման, դատական նիստերի, զինվորական հանձնաժողովների խորհրդակցությունների այլեւայլ արձանագրություններ, մեղադրական եզրակացություն, դատավճիռ, գնդակահարությունն ի կատար ածելու տեղեկանք եւ այլ նյութեր:

Ակսել Բակունցի կյանքն ընդհատվեց թռիչքի մեջ՝ 38 տարին նոր էր բոլորել, երբ գնդակահարվեց՝ մեղադրվելով ժամանակի բոլոր մեղքերի մեջ՝ որպես «ժողովրդի թշնամի», «ազգայնամոլ», «ահաբեկիչ», «հակահեղափոխական» եւ «տրոցկիստ»: Ձերբակալվել է 1936 թվականի օգոստոսի 9-ին, գնդակահարվել 1937 թվականի հուլիսի 8-ին:

Հիմա տեսնենք, թե այս ամենի մեջ ինչպես է երեւում այս արտակարգ նուրբ ու զգայուն գրողի ու մարդու, իր հայրենիքի նվիրյալ քաղաքացու կերպարը: Այս տեսակետից եղած նյութերը լուսաբանելու կարեւոր նախադրյալ են նաեւ Բակունցի արդարացման կապակցությամբ նրա կնոջ՝ Վարվառա Չիվիջյանի վկայությունները՝ գրված 1955 թվականին [2, էջ 324-331]:

«Կալանքի ժամանակ նրա հետ ունեցել եմ երեք տեսակցություն՝ 1936թ. սեպտեմբերի վերջին, հոկտեմբերին եւ նոյեմբերին», - գրում է կինը եւ ներկայացնում: Առաջին հանդիպման ժամանակ Բակունցը «քիչ էր փոխվել <...>, զգացվում էր, որ իր ձերբակալությունը համարում է ինչ-որ թյուրիմացության հետեւանք, որը շատ շուտ պիտի բացահայտվեր» [2, էջ 328]:

Հոկտեմբերի այցելության ժամանակ Բակունցի սպիտակեղենը տանը լվանալիս շապիկի վրա նկատում է արյան հետքեր: Այնուհետեւ. **«Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, ում գիտեի երկար տարիների ընթացքում: Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկլտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը, <...> քամելով արցունքից ամբողջովին խոնավ թաշկինակը»:**

Բակունցը կնոջն է վերադարձրել Մոպասանի երկերի ռուսերեն ժողովածուն (առաջին երեք ամիսներին թույլատրել են գեղարվեստական գրականություն), որի մեջ զետեղված «Պարան» նորավեպի առանձին բառերի տակ կինը նկատել է մատիտով նշված կետեր, իսկ լուսանցքները սեղմված-ընդգծված էին եղունգով. **«բովանդակությունը բացահայտեց նրա բարոյական ծանր կացությունը»**:

Բակունցն արդեն նույնական չի եղել, նրան այնքան էին տանջել, որ փոխվել էր:

Երրորդ այցելության ժամանակ, արդեն մահապատժի սպասումով, իրեն պահել է հանդարտ: Կնոջը հարցրել է Մոպասանի նորավեպի մասին. **«Հը՛, ընթերցե՞լ ես...»: «Ծանր է», - պատասխանել է կինը:** Բակունցը շարունակել է. **«Ամուր եղիր, հաշվիր, որ վթար է եղել, եւ ես վթարի եմ ենթարկվել»:**

Վերջին երկու այցելություններին ներկա է եղել նաեւ 12-ամյա որդին՝ Սեւադան, ում հետ շատ կապված էր: Դիմելով տղային՝ ասել է. **«Դու շա՞տ կամաչես եթե քո հորը Երեւանի փողոցներով տանեն դատարան: <...> դու մի ամաչիր քո հոր համար, հիշի՛ր, հայրդ այնպիսի բան չի արել, որի համար կյանքում պիտի կարմրես»:**

Կինը մտաբերում է նաեւ իր վերջին այցելությունը. **«1937 թ. հուլիսի 18-ին չընդունեցին իմ տարածը, ասելով, որ Բակունցն արդեն աքսորվել է» [2, էջ 329]:**

Խաբել են, քանի որ 10 օր առաջ արդեն գնդակահարվել էր:

Իսկ խաբելը, ինչպես միշտ, նաեւ այդ տարիներին պետական քաղաքականություն էր: Հետո, ավելի ուշ, Բակունցի մոր հարցումին պատասխանել են, որ նրա որդին մահացել է 1945-ի նոյեմբերին: Հերթական խաբեությունը:

Ավելացնենք, որ որպես «ժողովրդի թշնամու» կին 1937 թվականի սեպտեմբերի 17-ին ձերբակալել են նաեւ Վարվառա Չիվիջյանին, 8 ամիս առանց հարցաքննության պահել բանտում, հատուկ խորհրդակցության որոշմամբ ութ տարով աքսորել Տեմինկովյան ճամբար, որտեղից վերադարձել, բնակվել է Գորիսում՝ Բակունցի հայրական տանը եւ զբաղվել որդու դաստիարակությամբ:

Նրա ձերբակալությունից հետո բռնագրավել են Երեւանի տունը՝ անապաստան թողնելով որդուն եւ քաղցկեղով հիվանդ մորը, միաժամանակ տանելով նաեւ Բակունցի ձեռագրերը:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում բանտից Բակունցի գրած չորս դիմումները: Առաջին բավականին ծավալուն դիմումը գրված է 1936թ. հոկտեմբերի 6-ին՝ ձերբակալությունից երկու ամիս անց: Պատմում է 1933 թվականից Չարենցի հետ իրենց խզված կապի մասին, երբ վերջինս քննադատել է հայ «ազգային մտավորականության տիպեր»-ին երգիծող իր ստեղծագործությունը: Խզումը խորացել է 1934-ին գրականության լեզվի հարցերի քննարկման դիսպուտում՝ **«հենց գրական լեզվում Չարենցն ինքը ազգայնամոլության հետեւորդ է»:**

Խզումն էլ ավելի է խորանում 1933թ. ապրիլին «Գրական թերթ»-ում Մկրտիչ Արմենի տպագրած «Չարենցի եւ հարակից հարցերի մասին» խորապես ազգային բնույթ ունեցող հոդվածից իր հրաժարումդժգոհությամբ: Այս կապակցությամբ հիշեցնում է իր ինքնաքննադատական ելույթները, մտաբերում է Չարենցի դեմ իր ելույթը՝ գրողների միության անդամությունից հրաժարվելու վերջինիս 1935 թվականի մարտի 8-ի հայտարարության քննարկմանը:

Չարենցի հետ գրական եւ մարդկային տարաձայնությունների խորացման իրական դրդապատճառները բերելով՝ ավելացնում է. **«... ես ստեղծագործաբար վաղուց եմ գիտակցել խմբակային միջավայրի ամբողջ կործանարարությունը, ինչի համար էլ խզեցի կապերս Չարենցի, իսկ մինչեւ նա՝ գրողների ամբողջ խմբի հետ» [1, էջ 241]:**

Այնուհետեւ Բակունցը խոսում է խիստ մեկուսացման պայմաններում գտնվելու հոգեբանական ահավոր ծանրության մասին, հաջորդում է իր վիճակի գիտակցման ինքնախոշտանգող բարձրաձայն մենախոսությունը. **«Փաստը մնում է անշրջանցելի. ես մեկուսացված եմ: Այստեղից սկսվում է ամոթի տանջալի գիտակցումը,**

Որ բացառվեն արտադրական վթարները

էջ 2

Տարվա ընթացքում մեկ տեխնածին դեպք է գրանցվել հեղուկ գազի լցակայանում:

2007 թվականից Կարեն Մկրտչյանը տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի Սյունիքի մարզային փորձաքննության բաժանմունքում է՝ նախ՝ որպես ամբարձիչ սարքավորումների եւ կաթսայատեղակայանքների փորձագետ, այնուհետեւ՝ գլխավոր փորձագետ: 2015-ի սեպտեմբերի 1-ից Սյունիքի բաժանմունքի պետն է: Երեք փորձագետով են (Կարեն Մկրտչյան, Ռուբիկ Մարտիրոսյան (տեխանվտանգության ոլորտում է 1989 թվականից), Վլադիմիր Մանուչարյան) իրականացնում մարզի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննությունը: Իսկ ո՞րն է ամենանեղ օղակը համակարգում:

«Հարկ է նշել, որ կան դեպքեր, երբ արտադրական վտանգավոր օբյեկտները ստացել են բացասական եզրակացություն, սակայն դրանք շարունակում են շահագործել, ինչը վտանգավոր է տեխնածին ռիսկի առումով», - ասում է Կարեն Մկրտչյանը եւ հավելում, որ իրենց բաժանմունքն այժմ ապահովված է արդյունավետ աշխատանք ապահովող բոլոր միջոցներով: Իսկ փորձաքննության իրականացման պրոցեսին էապես նպաստել է շարժական լաբորատորիան, որ հնարավորություն է ընձեռնել փորձաքննության ընթացքում իրականացնել կանխարգելում, փորձարկում եւ զննում:

Առանձին խոսակցության նյութ է մարզի վերելակային տնտեսության տեխնիկական անվտանգության խնդիրը: Սյունիքի մարզի փորձաքննության անվտանգության բաժանմունքը սպասարկում է մարզկենտրոնի եւ Քաջարանի բազմաբնակարան շենքերի վերելակները: Կապանի բազմաբնակարան շենքերի 159 վերելակից գործում է մոտ 90-ը: Հայադրբեջանական հակամարտության ժամանակ եւ դրան հաջորդած տարիներին, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, ոչ միայն անգործության մատնվեց մարզկենտրոնի վերելակային տնտեսությունը, այլեւ վերելակների մի մասը թալանվեց: Կարեն Մկրտչյանի փոխանցմամբ՝ եթե 2011-ին բացասական եզրակացություն էր տրված վերելակների մեծ մասին, ապա այժմ իրավիճակն զգալիորեն շտկվել է: Մի փաստ էլ հայտնեց «Վերելակ» ԱԿ ընկերության տնօրեն Սամվել Մկրտչյանը. միայն ընթացիկ տարում 30 վերելակ է նորոգվել Կապանում Սյունիքի մարզպետարանի եւ Կապանի քաղաքապետարանի գործուն աջակցությամբ:

Փաստն ինքնին ուրախացնող է, բայց վերելակից օգտվելու տարրական նորմերը պիտի պահպանել: Մերժելի երեւույթ է այն, որ մարդատար վերելակը բեռնատարի տեղ են օգտագործում՝ շինարարական նյութեր բարձրացնելով ութերորդ, իններորդ հարկեր: Միով բանիվ, արգելվում է շինանյութեր տեղափոխել մարդատար վերելակով (դրա բեռնատարողությունը 320 կգ է), ինչպես նաեւ վերելակով երթեւեկելիս խցիկում չորս մարդուց ավելի չպիտի լինի:

«Վատն այն է, որ ստուգում ես վերելակը, դրական եզրակացություն տալիս եւ բառացիորեն 10-15 օր հետո, երբ առիթ է լինում օգտվել նույն այդ վերելակից, ցավով նկատում ես, որ ծխախոտով վառել են կանչի սեղմակները, անպարկեշտ գրություններ թողել խցիկի պատերին: Խոսքս այն մասին է, որ մեր որոշ համաքաղաքացիների կենցաղավարական կուլտուրան շատ հեռու է բավարար լինելուց», - իր նկատառումներն է հայտնում Կարեն Մկրտչյանը:

Մեր զրույցի ավարտին բաժանմունքի պետին խնդրեցինք կոչով դիմել կամ պարզապես խոսք ուղղել ձեռնարկությունների տնօրեններին, տնտեսվարող սուբյեկտներին կամ պարզապես բնակչությանը: Կարեն Մկրտչյանը փոխանցեց, որ շատերն անտեսում են տեխնիկական անվտանգության տարրական կանոնները՝ չգիտակցելով, թե դրանք ինչ վտանգավոր հետեւանքներ կարող են ունենալ: Նաեւ նշեց, որ կենտրոնի մարզային փորձաքննության բաժանմունքն ապահովված է տեխնիկական անվտանգության փորձաքննության համար անհրաժեշտ դիագնոստիկա եւ զննում իրականացնող ժամանակակից տեխնիկական միջոցներով եւ սարքավորումներով, մինչդեռ կան օբյեկտներ, որոնք գրանցված չեն եւ գործում են առանց անհրաժեշտ տեխնիկական անվտանգության փորձաքննության, մինչդեռ արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործման դեպքում օրենսդրական նորմերի չպահպանելը հղի է տեխնածին վթարի ռիսկերով եւ դրանով պայմանավորված տխուր հետեւանքներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

միլիոն անգամ բանտարկման փաստի վերապրումը: Օտարված եմ հանրությունից, ամոթն ստվեր է նետում նաեւ արված լավի վրա, ստվերում քո մասին եղած հիշողությունը, երկրի վրա աղմկում է ուրախությունը եւ, ինչպես կրծոններ ճոխ սեղանից, քեզ են հասնում առանձին անհստակ պատառիկներ: Մտածում ես մեկ ժամ, երկու, երեք, մեկ օր, երկու օր, մտածում ես հիմարանալու աստիճանի, մինչեւ հիշողությունդ փուլ է գալիս, եւ չգիտես՝ գիշեր է, թե ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կյանքը մնաց փակ դռան ետեւում:

Մտքերը հեռուն են գնում, իսկ ինչ կլինի հետագայում. ահա կվերջանա նախաքննությունը, ինչ է սպասվում հետո: <...> Երբ ես հարցնում եմ, թե ինչ է լինելու հետո, հուսահատվում եմ, գիտակցությունս մթագնում է, ջղաձգությունները խեղդում են կոկորդս...» [1, էջ 243]:

Բակունցն իրեն նմանեցնում է մի մարդու, ով աղոտ հույսի հետ մեկտեղ նաեւ «մահվան հոտ է առնում»: Բակունցն ասում է՝ ես օճառի գործարանի տնօրեն չեմ, որ որտեղ էլ աքսորեք ինձ համար միեւնույնը լինի, ես գրող եմ՝ կապված որոշակի լեզվի ու միջավայրի հետ, ուստի խնդրում եմ եթե ինձ աքսորելու եք՝ աքսորեք Հայաստանի ծայրամասերից մեկը, եւ ոչ թե օտար մի տեղ:

Գրողը սրանով հուշում է, որ իրեն աքսորեն եւ ոչ թե գնդակահարեն. **«Ինձ գրելու ու կարդալու հնարավորությո՞ւն տվեք, ինձ գի՞րք ու մատի՞տ տվեք: <...>: Թողեք, որ ես մնամ Խորհրդային Հայաստանի հավատարիմ շունը» [1, էջ 245]:**

Նախավերջին դիմումը վերաբերում է իր դեմ Նաիրի Զարյանի գրած զրպարտչական հոդվածներին, որոնց ինքն այլեւս չի կարող պատասխանել: Իսկ Զարյանը Բակունցի դեմ տպագրել է մեկ տասնյակից ավելի չարախոսություն ու կեղծիք: Ասում է՝ եթե դրանք ճիշտ լինեն՝ **«Հրամայե՛ք, ընկեր՛ ժողկոմ, որպեսզի ծեծեն ինձ...» [1, էջ 269]:**

Վերջին դիմումում, որ գրել է գնդակահարությունից 5 օր առաջ, այլեւայլ հարցերի հետ մեկտեղ խոսում է իր գրած-ավարտած «Էրիմենյան մանրէ» կամ «Հայկական մանրէ» վիպակի մասին: Վիպակը ժամանակին շատերի ձեռքով է անցել՝ Խանջյան, պետհրատի տնօրեն, առանձին գրողներ, բայց այն առ այսօր հայտնաբերված չէ:

«Մեղադրական եզրակացությունը» (6. 08. 1937) Բակունցին զրկում է ապրելու հույսից: Ըստ այդմ՝ նա «հակահեղափոխական տրոցկիստական նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի անդամ է», կենտրոնը պետք է ահաբեկչական գործողություններ կատարեր ընդդեմ ՀամԿ(բ)Կ եւ խորհրդային իշխանության ղեկավարների: Իբր այդ խումբն է 1934-ի դեկտեմբերի 1-ին կազմակերպել Կիրովի սպանությունը եւ նախապատրաստում էր համապատասխան ահաբեկչական գործողություններ ընդդեմ Ստալինի ու Բերիայի: Իբր Չարենցի հետ մեկտեղ ստեղծել էր հակախորհրդային գրական կազմակերպություն, կապված է եղել Մոսկվայի տրոցկիստական կենտրոնի հետ:

Գործը լսվել է փակ դատական նիստում, դատավճիռը՝ պատժի առավելագույն չափ՝ գնդակահարություն, ինչն էլ իրականացվում է 1937 թվականի հուլիսի 8-ին:

Բակունցը պաշտոնապես արդարացվել է 1955թ. մարտի 2-ին:

Հայտնի է, թե ինչ տանջալի ձեւերով էին ստալինյան դահիճները դատապարտվածներից ցուցմունքներ կորզում, այնքան տանջալի, որ ոմանք չէին դիմանում օրեր շարունակ երկարող ամեն տեսակի հոգեբանական կտտանքներին, ծեծ ու ջարդին եւ, ուշքի չգալով, ավանդում էին հոգին:

Աշխարհի մեկ վեցերորդ մասում ծավալվող այս դառնաղի ողբերգության ամբողջ մահաշունչ ինդուստրիան հետագայում պատկերեցին գրողները՝ ստալինյան հալածանքներից նախկին տուժածները: Այս տեսակետից ոչ միայն գեղարվեստական, այլեւ հանրագիտական նշանակություն ունի Ալեքսանդր Սոլժենիցինի «Գուլագ արխիպելագ» բազմահատոր վեպը: Հրաշալի է Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակն ու սիբիրյան պատմվածքների շարքը: Գրվեցին նաեւ բազմաթիվ այլ հրաշալի վեպեր, վիպակներ, հիշողություններ:

Բայց այս ամենն ավելի ուշ՝ անհատի պաշտամունքը հաղթահարելուց հետո: Դժվարը հենց նույն դժոխքի մեջ դժոխքի մասին գրելն էր: Եվ, այո՛, ստալինյան հալածանքների բովում եւս գրվեցին գործեր, որոնց հեղինակները գիտեին, որ զոհ են գնալու արյունոտ նախճիրին:

Այդպիսիներից էր իրոք հերոսական այնպիսի մի հանճար, որպիսին Եղիշե Չարենցն էր:

Ահա իր գրական ու հոգեւոր բարեկամի՝ Ակսել Բակունցի ծանր փորձության օրերին, երբ Չարենցը դեռ ձերբակալված չէր, բայցեւ հայտարարում էր՝ որտեղ իր ընկերները, այնտեղ էլ ինքը, գրեց իր լավագույն բանաստեղծություններից մեկը, որ մահվան դարանակալ կարմիր աչքերին նայող իրենց թանկ ընկերության սրբազան աղոթքն ասես լինի: Սրանով Չարենցն իր վճռական ո՛չն ասաց իրեն ու Բակունցին իրար դեմ հանող ամեն տեսակի մեծ ու փոքր չեկիստների սադրանքներին:

Ահա այդ գլուխգործոցը՝ գրված 1936 թվականի հոկտեմբերի 14-ի գիշերը.

...Ե՛վ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերն հնադարյան, -
Եվ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երկերի մաքուր սկիհներում պահված՝
Խորհուրդների համար մշտահմա,
Որպես խորհուրդը մեր նահիրական ոգու,-
Քո «Միրհավի» համար - եւ լուսեղեն՝
Արփենիկի հուշով սրբագործված հավետ,
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
Որ բուրելու է հա՛ր աննյութեղեն, -
Եվ վերջապես քո վեհ, հերոսական
«Սերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ
Սեւ ցելերի վրա մեր գոյության այս սեւ,
Շաղում է շողք ու սերմ անանձնական, -
Այս ամենի համար, - եւ «Ծիրանի»
Հազարամյա փողի համար քո այն,
Որ դարերո՞վ տենչած խաղաղության
Երգն է հնչում, - եւ մեր ժողովուրդը քանի
Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո՝
Հնչելու է երգեր եղբայրական, -
Այս ամենի համար, օ՜, խեղճ իմ բարեկամ
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...
Այս ամենի համար, - եւ քո եղերական
Տառապանքի համար, որ արդ կրկին
Վեհություն է խառնում քո անաղարտ երգին -
Ես քեզ պարգում եմ ձեռք եղբայրական...
Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ, -
Երբ դեռ դու այր էիր մի անարատ,
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...
[5, էջ 164-165]:

Հ. Գ.

Այս ամենի մասին մենք այսօր պարտավոր ենք հիշել, գրել եւ հիշեցնել, որովհետեւ Ստալինը ... վերադառնում է: Ռուսաստանում այսօր քննադատական ալիքն ավելի ուղղում են Խրուշչովի դեմ, որ համարձակորեն հաղթահարեց անհատի պաշտամունքը, նորից սառեցնում են նրա «ձնհալը» եւ մեծարում Ստալինին:

Անգամ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Սոլժենիցինի անունն են մղում ետնախորք, որովհետեւ նրա «ԳՈՒԼԱԳ արխիպելագ» բազմահատոր վեպը ստալինյան բռնաճնշումների հայելի-հանրագիտարանն է: Ըստ այսօրվա մեկնաբանների՝ այդ վեպը ստվեր է նետում Ռուսաստանի հեղինակության վրա, ուստի պետք չէ, որ տեղ գտնի անգամ դպրոցական ծրագրերում:

Այսօր Ռուսաստանում վերականգնվող կետրոնաձիգ իմպերիալ ոգու համար Ստալինն ավելին է, քան միլիոնավոր մարդկանց կյանքը: Եվ դա հիմնավորում են նրանով, որ Ստալինը հաղթեց պատերազմում, ԽՍՀՄ-ի վերահսկողության սահմանները Չինաստանից հասցրեց մինչեւ Բեռլին, երկրին տվեց ատոմային զենք, զարգացրեց արդյունաբերությունը, Երկրորդ համաշխարհայինից հետո կնքեց այնպիսի նպաստավոր դաշնագիր, որ հետագա տասնամյակներին ապահովեց ԽՍՀՄ առաջատար դերը աշխարհում:

Մոռանում են, որ ստալինյան հալածանքներին զոհ գնացին տասնյակ միլիոնավոր մարդիկ եւ գիտակցաբար այդ թիվն աստիճանաբար նվազեցնում են, որ արդյունաբերականացման հետ մեկտեղ ոչնչացվեցին գյուղական տնտեսությունները, ամայացան տասնյակ հազարավոր գյուղեր եւ դեռ առ այսօր գյուղը ոտքի չի կանգնում, այդ իսկ պատճառով վիթխարի երկիրը չի կարողանում ինքն իրեն կերակրել: Մոռանում են, որ հաղթանակն արժեցավ 27 միլիոն մարդկային կյանք, որ ընդամենը պաշտոնական թիվն է, իսկ իրականում մարդկային կորուստների թիվը՝ ավելացրած նաեւ անհայտ կորածներին, գերությունից չվերադարձածներին ու փախածներին, անցնում է 50 միլիոնը:

Այնպես որ զգուշացեք՝ Ստալինը ... վերադառնում է, որ նշանակում է՝ չարիքն արթնանում է ընդդեմ ժողովրդավարական այնպիսի նվաճումների, որպիսիք են խոսքի ազատությունը եւ մարդու իրավունքը:

1980-2000-ական թվականներին Ռուսաստանում ստալինյան հալածանքները բացահայտող գրքեր էին ու մեկնաբանություններ, իսկ այսօր դնում են նրա արձանները եւ, նրա նկարը դրոշ արած, երթի դուրս գալիս:

Գրականություն

1.Գասպարյան Դ., Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը, Ե., «Զանգակ», 2009, 544 էջ:

2.Գասպարյան Դ., Հայ գրականություն, գիրք 6-րդ, Ե., «Տիգրան Մեծ», 2017, 736 էջ:

3.Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը եւ մյուսները, Ե., «Ապոլոն», 1994, 727 էջ:

4.Մահարի Գ., Սիբիրական: Արձակ, չափածո, նամակներ, Ե., Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2009, 710 էջ:

5.Չարենց Ե., Անտիպ եւ չհավաքված երկեր, Ե., ԳԱ հրատարակչություն, 1983, 712 էջ: Ա. Բ-ին

Հրդեհային անվտանգությունն Ամանորին

էջ 4

ինչպես նաեւ անցումներում լրացուցիչ բազկաթոռներ տեղադրել.

- միջոցառումների ժամանակ դահլիճում լույսը մարել.
- ելքի նախամուտքերում, տարհանման ուղիներում պահել որեւէ տեսակի գույք եւ նյութեր, խցանել տարհանման ելքերը.
- տարհանման ճանապարհներին ստեղծել մարդկանց ազատ տարհանմանը խոչընդոտող հարմարանքներ.
- օգտագործել սարքեր եւ սարքավորումներ, երբ շահագործման պայմանները չեն համապատասխանում արտադրող կազմակերպությունների երաշխիքներին, ինչպես նաեւ անսարքությունների դեպքում, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.
- շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ եւ էլեկտրալարեր.
- օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից եւ այլ տիպի էլեկտրական հարմարանքներից եւ սարքերից.
- էլեկտրալամպերը կամ ջահերը փաթաթել թղթով կամ այլ այրվող նյութերով.
- բեմի վրա ծխել, օգտագործել բաց կրակ, աղեղային լուսարձակներ եւ կրակային այլ էֆեկտներ.
- երեխաներին առանց հսկողության թողնել տոնածառերի մոտ:

Ամանորի հանդիսությունների համար նախատեսված տեղերում անհրաժեշտ է մշտապես ունենալ հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչ, ջուր, ավազ եւ այլն: Տոնածառերի հսկողությունը պետք է իրականացնեն նախօրոք հրահանգավորում անցած անձինք: Բեմադրությունների ձեւավորման ժամանակ դեկորացիաների շուրջը պետք է լինի մեկ մետր լայնությամբ անցում: Ներկայացման ավարտից հետո բոլոր դեկորացիաները, ինչպես նաեւ բուտաֆորիան պետք է քանդվեն եւ բեմից տեղափոխվեն հատուկ պահեստներ:

Բաց հրապարակներում հատուկ էֆեկտների կիրառման անհրաժեշտության դեպքում, հրդեհները կանխելու նպատակով, պատասխանատու բեմադրիչի (գլխավոր ռեժիսորի, գեղարվեստական ղեկավարի) կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան հակահրդեհային միջոցառումներ: Զանգվածային միջոցառումների ժամանակ հնարավոր հրդեհներ, բարձր ջերմաստիճանային բոցավառումներ, պայթյուններ առաջացնող հրագործական արտադրատեսակներ օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել դրանց վտանգավորության աստիճանը, որոշել անվտանգության գոտիները, նախատեսել հրդեհաշիջման միջոցները: Հրթիռներից կրակելու ուղղությունը պետք է ընտրել այնպես, որպեսզի չայրված աստղիկները գետնին ընկնելու դեպքում բացառվի հրդեհի բռնկումը:

Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը մեկ անգամ եւս նախազգուշացնում եւ հորդորում է պահպանել հրդեհային անվտանգության կանոնները:

Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչություն

Հայրենաճանաչությունը գեղանկարների տեսքով

Այս խորագրով Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի նախաձեռնությամբ Կապանի մանկական գեղարվեստի դպրոցի սաների եւ շրջանավարտների ստեղծագործությունների ժամանակավոր ցուցադրություն էր կազմակերպվել: Ներկայացված էր 14 աշխատանք, որում քաղաքային պատկերներ էին, պատմական թեմաներով արված նկարներ, բնապատկերներ՝ «Վաչագանի ստորոտին», «Ավարայրի ճակատամարտը», «Վարդան Մամիկոնյան», «Մարտից առաջ», «Գաղթ», «Եղեռն», «Գյուղում», «Զբոսաշրջիկներ Հայաստանում», «Հայաստան» եւ այլն: Դրանք որոշակի պատկերացում էին տալիս գեղանկարիչների նախասիրությունների եւ ստեղծագործական ընկալումների մասին:

Ցուցադրանքի բացմանը Կապանի գեղարվեստի դպրոցի մասին հակիրճ խոսք ասաց պատմության թանգարանի մշակութային միջոցառումների կազմակերպիչ Աստղիկ Հակոբյանը, ով մասնավորապես նշեց, որ դպրոցի սաների գեղանկարչական աշխատանքները Կապանի հանրությանը ներկայացնելու թանգարանի առաջին փորձն է: Ցուցադրությունը կտեւի երեք ամիս, որին դիտելու կհրավիրվեն Կապան համայնքի կրթական հաստատությունների սաները: Ինչպես փոխանցեց Ա.Հակոբյանը, առաջիկայում նախատեսվում է կերպարվեստի բոլոր ճյուղերը ներառող ցուցադրություն կազմակերպել՝ դրանում ընդգրկելով քաղաքում գործող բոլոր մշակութային-կրթական հաստատությունների ներուժը:

Կապանի գեղարվեստի դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են մարզային, հանրապետական եւ միջազգային մրցույթների, մրցանակների ու դիպլոմների արժանանում, նրանց աշխատանքներն ընդգրկվում են տարեգրքերում: Այդ մասին պատմեց գեղարվեստի դպրոցի դասատու Էդգար Ստեփանյանը՝ երախտագիտություն հայտնելով ցուցադրությունը կազմակերպելու համար: Ի դեպ, թանգարանում փակցված էին տարբեր մրցույթներում Կապանի գեղարվեստի դպրոցի 2008-2017 թվականներին ձեռք բերված հաջողությունների մասին պատմող նյութեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նոր խանութ - սրահ Կապանում

Դեկտեմբերի 4-ին Կապանի Շահումյան փողոցի N20 շենքի առաջին հարկում բացվեց Mobile Centre բջջային հեռախոսների եւ աքսեսուարների ցանցի «Կապան» խանութ-սրահը:

Ցուցադրանքում եւ վաճառքում բջջային հեռախոսների ու աքսեսուարների հարուստ տեսականի կա: Խանութ-սրահը երկրորդն է Սյունիքի մարզում, առաջինը բացվել է Սիսիանում: Իսկ ընդհանրապես հանրապետությունում 38 նման խանութ-սրահ է գործում: Mobile Centre բիզնեսի եւ մարքետինգի տնօրեն Գոռ Պողոսյանի փոխանցմամբ՝ իրենք բոլոր հանրահայտ բրենդների պաշտոնական ներկրողն են Հայաստանում: Խանութ-սրահի բացման հետ պայմանավորված եղան անակնկալներ. 20 հազար դրամ եւ ավելի գնումներ կատարողները ստացան նվերներ՝ բջջային հեռախոս եւ լիցքավորիչ մարտկոց: Նախատեսվում է նման խանութ-սրահ բացել Գորիսում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բեմահարթակում «Վարք հայոցն» էր

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային կանգառ» ծրագրի շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ ծրագրի եզրափակիչ համերգը՝ «Հայաստան, սեր իմ» խորագրով: Բեմահարթակում «Վարք հայոց» ավանդական երգի-պարի ինքնագործ խումբն էր (ղեկավար՝ Սարգիս Փարամազյան):

Երգ ու պարով, բառ ու բանով խմբի անդամները ներկայացրին հայ ժողովրդի անցած ճանապարհը, Տարոնի, Վասպուրականի, պատմական Հայաստանի այլ տարածաշրջանների ժողովրդական արվեստը, բանահյուսական նշխարներ: Հայ ռամիկի կենսափիլիսոփայությունն էր ազգագրական երգերում՝ «Գութքան չլիներ, աշխարհն ի՞նչ էր» եւ ըմբոստ ոգին՝ խմբի ծրագրում ներառված խրոխտ պարերում: Ներկայացվեց նաեւ հնօրյա հարսանեկան մի ծես: Հանդիսականը ջերմ ծափերով վարձատրեց խմբի կատարումները:

Համերգի ավարտին խմբին ողջերթի եւ օրհնանքի խոսքեր հղեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը՝ հիշեցնելով Կոմիտաս վարդապետի խոսքը՝ ժողովուրդն է ամենամեծ ուսուցիչը, գնացեք եւ սովորեցեք նրանից: Իսկ վերջում խմբի անդամները եւ հանդիսականները շուրջպար բռնեցին դահլիճի ճեմասրահում:

Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց խմբի հիմնադիր ղեկավար, ծագումով կապանցի Սարգիս Փարամազյանը, խումբը ստեղծվել է 2013 թվականին՝ մի խումբ ազգաններ երիտասարդների կողմից, ովքեր սեր ունեին ազգային մշակույթի հանդեպ, ցանկություն ունեին այն կրելու, շաղկապելու հետագա սերունդներին, դառնալու կամուրջ անցյալի եւ ապագայի միջեւ: Այս ամռանն ու աշնանը խումբը երկու միջազգային փառատոնի է մասնակցել, նախ՝ Հունաստանում կազմակերպված ֆոլկլորային, ապա՝ Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնիում կայացած Մահմուդ Էսամբաեւի անվան ժողովրդական պարերի փառատոնին:

«Վարք հայոցը» դեկտեմբերի 3-ին հանդես եկավ Քաջարանում եւ Մեղրիում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Տանձապափ. կարմիր քարի եւ սպիտակ ջրի լեգենդը

Իրականի եւ առասպելականի համաձուլվածք են քարափները: Դրա համար նրանք լեգենդային են: Մեր քարափի սկիզբը Սղնախի բարձունքում է: Նա շրջանցում է Մեծ ձորը, Հարսնաձորը, ապա գրկում, շրջափակում Օվենի կաղնու անտառը եւ միանում Որոտանի ափամերձ քարափների մեծ գերդաստանին: Միլիոնավոր տարիներ նա հետեւում է ընթացող իրադարձություններին: Ի՞նչ գաղտնիքներ ունի, ո՞վ կարող է վերծանել անհնարինը: Բայց ավանդականն այսպես է պատմում.

«Կոփելուց անմիջապես հետո մի ներքին ցավ է շրջել քարափի ներսում, իջելբարձրացել է, աջուձախ արել, ելքեր փնտրել, բայց ուղի չի գտել: Գնալով ցավը սաստկացել է: Կնճռոտվել է քարափի դեմքը, տեղ-տեղ խորշոմներ են գոյացել, ու անտանելի ցավից շառագունել, կարմիր է կտրել նրա երեսը: Այդ երկունքն ավարտվել է մի շքեղ լուսաբացի, երբ քարափի կրծքից բխել է հորդառատ, հրաշք մի աղբյուր: Անմիջապես հանգիստ նինջ է իջել քարափին: Նրա դեմքի կարմիրն անցել է, շիկնանքը՝ մնացել: Դրանից է ծնվել Կարմիր քարի քարափ անվանումը:

Քանի որ կրծքից բխած աղբյուրի սպիտակ փրփուրները գարնանը կուսական վարսերի պես զարդարում են նրա հպարտ լանջը, աղբյուրն էլ կոչել են Սպիտակ ջուր»:

Սա է իրականը:

Սուրեն Վարդանյան
ք.Գորիս

QR կոդ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 14.12.2017թ.: